ՆՈՐ-ԴԱՐ

№ 118 ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի, 16 Յուլիսի **1892** Հինգշաբթի, 16 Յուլիսի ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 118

Տարեկան 10 թուղթ, վեց ամիսք՝ 6 թուղթ, երեք ամիսք՝ 3 ր. 50 կ. ամիսք՝ 1 ր., մասամ՝ 5 կոպ. Բաժանող կրնան Փիֆլիսում միմիայն խմբագրատանից։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Нор-Дара» или Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով. Յայտարարութիւնների գինն 2 կ., բնկամների համար կրկնապատիկ։

ԹԻՓԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ԿԱՂՄԻՑ

Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ առարկութիւն է բացուած խալխալով հիւանդացածների կամ նրանից մեռածների չքաւոր բնակիչներին օգնելու համար։ Հաւաքուած փողերը կը բաժանուեն քաղաքագլխի ղեկավարութեամբ առաջնակարգ մասնախմբերի ձեռքով. նպաստները կը տրուին ինչպէս գրամով, նոյնպէս և անհրաժեշտ իրերով։

3—2.

ԲՈԼԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդ օտ. — Բարեգործական հայոց մէջ։

Քրանիկոն. — Պաշտօնական տեղեկութիւններ խոլերայի մասին։ Ժամանակաւոր հիւանդանոցներ։ Խոլերայի տարածման պատճառներից մէկը։ Խոլերայից հիւանդացածների թիւը։ Քաղաքագլխի կարգադրութիւնը։ Կուրի ջուրը։ Գեղնվիկցիայից խոյս չտալու հնար։ Լազարեանից։ Քուէթայիսից։ Ալեքսանդրապոլից։ Վլադիմիր Վասիլևից։

Թղթակցութիւններ. — Նոր-Նախիջևանից։ Զանգեզուրի գաւառից։ Նամակ Աստրախանից — Վ. Լեոնեան։

Քաղաքական. — Քաղաքական լուրեր։

Հեռագրեր։

Տեղեկատուութիւններ։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 15 յուլիսի, 1892 թ.

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Մենք ասած ենք միշտ առելու, որ հայ ժողովուրդը համեմատաբար աւելի ընդունակ է բարեգործութեան գաղափարն ըմբռնելու և բարեգործական նպատակներով նուէրներ տալու։

Նոյնը հայերիս համար առում են և մեր դրացի ժողովուրդները և աւելի հեռաւոր օտարները։ Եւ հիմք էլ կայ այդպէս առելու. գոնէ մի անհաւատութիւն չէ հայերիս համար, այլ մի իրողութիւն է, քանի որ յայտնի է մեզ մեզնում ինչպիսի նուիրատուութիւններ են լինում զանազան բարեգործական և հասարակական նպատակներով,— մեզ գպրոցների ու եկեղեցիների և մեզ այլ հաստատութիւնների համար և մեզ նոյն իսկ զանազան տաղանդների օգնելով, որ ուսում ստանան, կամ իրենց ստացած ուսումը կատարելագործեն։

Մեր նպատակը չէ այստեղ մէկ-մէկ թուել մեզ հայերիս մէջ ինչ ձևերով է յայտնւում բարեգործութիւնը և մեզ ինչ և ինչ բարեգործական նուիրատուութիւններ են եղած։ Մենք կամենում ենք միայն մատնացոյց անել այն անաչառութեան, այն առնուելութեան վրայ, որով հայերիս մէջ վերաբերւում են դէպի ներկայ ծանր ժամը, ընդհանուր ժողովրդական պէտքը։

Մինչդեռ ամենքը, մեր դրացի և մեզ հետ ապրող բոլոր ժողովուրդներն առանձնապէս հոգում են ներկայ գառնապէտ ժամին իրենց չափով մի բանով նպաստած լինելու հասարակ ժողովրդին, մինչդեռ չարժուում ու առանձին հիւանդանոց են պատրաստում խոլերայով հիւանդների համար և մեր դրացի թուրքերն ու պարսիկները, որոնց վրայ մենք սովոր ենք նախ իրրև ամեն բանում, ինչպէս և բարեգործութեան մէջ, մեզնից յետ մնացած մի ազգի վրայ,— մենք հայերս այդ մասին փայլում ենք մեր անգործութեամբ։

Ոչ մի բարեգործութիւն այնքան մեծ չի կարող լինել, որքան ծանր րոպէներում օգնել ժողովրդին, նրան նեղ վիճակը թեթևացնել, միջոցներ առ նրան քիչ ու շատ առատ ջրատիպն տալով՝ վարակուելուց զերծ մնալու համար. մանաւանդ թէ այժմեան ժամանակում մեզի գործած այդպիսի մի բարեգործութիւն ուրիշին տրած մի լաւութիւն էլ չէ, այլ իսկապէս իր անձնական ապահովութեան համար արած մի գործ։ Բայց, ինչպէս երևում է, հայերս չենք հասկանում այդպիսի բարեգործութիւնը, մենք ասած ենք բարեգործութիւնն ուրիշ ձևով և նպատակով տեսնել։ Եւ դրա հետևանքն է այն, որ դեռ և ս մեր Հարաւահայերի մէջ այս մի ամառուայ ընթացքում չգտնուեցաւ մէկը, որ մի աչքի ընկնող նուիրատուութիւն անէր յօգուտ ժողովրդի առողջացման։

Ոչ միայն Հարաւահայերն են այդպէս անկարեկիր մնում ներկայ ժամանակում, այլ և մեր այն հաստատութիւնները, որոնց նպատակն է հենց բարեգործութիւնը. այդ հաստատութիւնները անցգայ քար են գարձած և կենդանութեան նշան չեն ցոյց տալիս։

Ինչ են անում Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերութիւնը և նրա ճիւղերը, Թիֆլիսի Հայոց Հոգաբարձ. Ընկերութիւնը, Բագուի Մարդասիրական Ընկերութիւնը. ինչու գրանք նոյն իսկ իրենց գոյութիւնը չեն ցոյց տալիս։

Ինչով բացատրել մեր ընկերութիւնների այս անտարբերութիւնը։

Հարաւահայերի անկարեկցութիւնը գոնէ կարելի է և իրաւունք էլ ունինք նրանով բացատրելու, որ անշուշտ նրանք այսպիսի ճգնաժամերում արած նուիրատուութիւնը կորած բան են համարում, որովհետև նուիրած փողը կը ծախսուի և մի-երկու ամսից յետոյ կը մոռացուի իրենց արած բարի գործն և նրա հետևութիւնց անունը, մինչդեռ նրանք կամենում են այնպիսի գործ անել, որ երկար տարիներ, նոյն իսկ իրենց նուիրած չնչին գումարով, իրենց անունը օրհնութեամբ յիշատակուի և իրենք բարեգործ հռչակուեն։ Թէ մեր Հարաւահայերը մեծ մասամբ անուան համար են անում իրենց բարեգործութիւնը և ոչ քրիստոնէական մարդասիրութիւնից դրգռուած և կամ հասարակութիւնն ու ազգին օգնելու գիտակցութիւնից, այդ երևում է, բացի նրանց այժմեան անգործութիւնից, և նրանից, որ միշտ կրատակ թղթակիցներ մի քանի հազար և մինչև անգամ հարիւր բուբլին բաժանում են մի քանի տեղերի և հաստատութիւնների վրայ, որ ամեն տեղ էլ իրենց անունը յիշուի։

Այդպիսի բարեգործներին մենք պէտք է յիշեցնենք միայն ս. Աւետարանի խօսքը թէ՝ հրապարակներում վրայ ոգորմութիւն մի տալ, այլ ոգորմութիւնն այնպէս տալ որ քո ձախ ձեռք չիմանայ թէ աչն ինչ է գործում։

Բայց ինչ ասենք և ինչով բացատրենք մեր բարեգործական և մարդասիրական ընկերութիւնների ոչնչութիւնը ներկայ պէտի ժամանակ։

Այդ ընկերութիւնների վարչութիւնների պատուելի անդամները, որ ընտրութիւնների ժամանակ իրար գլուխ են ջարդում, աշխատելով ընտրուել, իրենց համար պատիւ համարելով անգամ ընտրուել, այժմ հեռու ամառանոցներում հանգիստ նստած են, գով վայրերում թեթևուս մինչև անգամ մոռացած են թէ խոլերայ կայ երկրում և պէտք է իրենց ընկերութիւնն էլ օգնի ժողովրդին։ Ինչու են մոռանում այդ պատուելիները, որ իրենք պատուի և հասարակութեան մէջ գիրք ձեռք բերելու համար չեն վարչութեան անդամ ընտրուած, այլ բան շինելու համար։

Գուցէ այդ ընկերութիւնների պեկավարներն իրենց մեռելութիւնը բացատրում են, առարկելով թէ իրենք չեն կարող ոչինչ անել առանց ընդհանուր ժողովի, քանի որ նախահաշուի մէջ մտած չեն այդպիսի արտակարգ ծախքեր, որանց համար առանձին դրամագլուխ չկայ նշանակած, բայց չէ որ խոլերան և ժողովրդի համար նախատեսուած չէ եղել և այնպիսի մի արտակարգ ոտիք է, որի համար կարելի է և առանց նախահաշուի ընկերութեան դրամագլխից արտակարգ ծախսեր անել ոտիքի առաջն առնելու համար. և կարծում ենք ընկերութեան անդամներից ոչոք էլ ապագայում չի մեզադրիլ թէ ինչու են տրած այդ արտակարգ ծախսերը։ Գուցէ այդ ընկերութիւնների գրամարկղները գատարկ են և ոչ մի կոպէկ պահեստի դրամ չկայ, որ չենք կարծում. գուցէ և ուրիշ յարգելի պատճառներ լինին այդ անգործութեանը,— այդ դէպքում արդէն խնդիրը փոխւում է։

Բայց ինչպէս էլ լինի, մեր ընկերութիւնների պարտքն է իրենց կենդանութիւնը ցոյց տալ և օգնել ժողովրդին. և եթէ չեն կարող այդ անել, գոնէ նրանց նախապահնների պարտքն է փարատել այն կասկածները և թիւր ենթադրութիւնները, որ ընկերութիւնների վերաբերմամբ տարածուած են հասարակութեան մէջ. ինչու մի չնչին և անտեղի լրագրական լուրի առիթ պատրաստ են եղել այդ ընկերութիւնները բացատրութիւն տալու, իսկ այժմ պատանձուելով պատանձուել են և չեն լուում լրագրական յարդրութիւններին ու հրատէրներին. մինչդեռ միւս կողմից հասարակութեան մէջ գնալով տարածւում ու զգացուելի է դառնում այդ ընկերութիւնների վերաբերմամբ, իսկ մենք, կարծում ենք, ընկերութիւններին ձեռնտու չէ։

Երկուսից մէկը, կամ պէտք է մեր ընկերութիւնները վերջապէս գործադրեն, մի բան անեն. կամ երևի չեն ուզում, որ տարուողները ուսանողներ և ժողովուրդը սուտ չդէպի այդ ընկերութիւնները, պէտք է յայտնեն իրենց անգործութեան ճշմարիտ պատճառը։ Այդ է պահանջում նոյն իսկ ընկերութիւնների շահը։

ՔՐՈՆԻԿՈՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Թիֆլիսում յուլիսի 13-ին Մխալչեան հիւանդանոցում կային 18 տարած. և 10 կին. ապրացել են 5-րդ քաղաքամասից, Փրկոնեանի թաղամասից—Պետրոսեան Յակոբեան. 6-րդ քաղաքամասից, Շէյխեան թաղամասի գանուած Հաջի-Ալիի տրակտիրից—Մահմեդ-Հաջի Խուդաւերդի-օղլի. 7-րդ քաղաքամասից, Ժանդարմսկի փողոցից, № 10 անից—Աբգարեան Սարգիս-օղլի. Մարտիրոսեան փողոցից, № 20 անից—Կարապետեան Յովսէփեան. Օպերայնայա փողոցից, Գոգոսեանի անից—Գրիգոր Պանէլեանց. 8-րդ քաղ. 2-րդ Գոնչարնայա փողոցից Մչերլիևէի № 2 անից—Եֆիմ Կոզլենկո. Սապից, Գլուխովո փողոցից, Սարուդովի № 2 անից—Իսան Վասիլեվ,—բնդամենը 7 հոգի։ Հիւանդանոցից դուրս է գնացել 1-ը—Սերգէյ Բալանդուրեան. Յուլիսի 13-ի երեկոյեան հիւանդների թիւն էր 24 տղ. և 10 կ. Լոյս 14-ի գիշերուայ բնդհատում հիւանդանոց են բերուած 3 տղամարդ. 3-րդ քաղ. նախկին հիւանդապահ մօտից—Կորշով (կասկածելի հիւանդութիւն), 9-րդ քաղ. Գրըլեայ-Ակքօթանդրովսկայա փող. № 14 անից—Գէորգ Կարապետեան, որ տառնն էր բժշկուում, և 10-րդ քաղ. Անդրկովկասեան փող. Լիշաեևի անից—Լուրիկեն Թորթրայից մեռել են—Աճեան Գրոմով 7-րդ քաղաքամասից բերուած, Իւան Կալենկով 9-րդ քաղաքամասից բերուած, և Անդրկ. Սաեպա-չուխին Մնում են 24 տղ. և 10 կ. Հիւանդանոցից դուրս յուլիսի 13 են հիւանդացել և իւր բնակարանում (բաանիկական փող. Ախոնդովի տուն № 274) էր խոլերած Ալի-Աակեր Միրզա-Բաբա-օղլի, որ նոյն օրն և եմ մեռաւ. 7-րդ քաղ. Թելաւսկայա փող. № 4 տանը հիւանդացել են Մակա Պապովեան և 1 տարեկան երեխան՝ Հայկանուշ և խոլերած են տանը. 8-րդ քաղաքամասից հիւանդանոց է ուղարկուած 11 տարեկան երեխայ Թեոդոր Նրովց։ Յուլիսի 13-ին պետուրական հիւանդանոցն է տարուած Նադեժդինսկի ապաստանարանից — Իոսիֆ Ջապրուդկի 10 տար.։

Անդրկովկ. երկ. հիւանդանոցն է տարուած Ախալքալաքից մի բանուորի կին՝ Աննա Ֆէարակիւր 4 տար. Մասնաւոր ապրկալ չեմ։

7-րդ քաղաքամասում իւր բնակարանում բժշկուող Սոֆիա Լազարեանցն առողջացել է։

Լազարեւում հիւանդացել է մի պարտաճանաչ պետուր, որին բժշկական օգնութիւն է տարուած։

Թիանէթի գաւառում խոլերայից մեռել է գիւղացու աղջիկ՝ Մարիա Բորգովի (այս օրերս մեռած կնոջ աղջիկը)։

Նիկաեբրինենֆելդ գաղթավայրում (Բորչալուի գաւ.) բացի յուլիսի 9-ին խոլերայից մեռած 1 հոգուց, յուլիսի 10-ին հիւանդացել են 3 կին և 1 տղ., որոնցից 3-ը մեռել են և մնում է 1-ը։

Ֆառաոլո գիւղում (Բորչ. գաւ.) յուլիսի 10-ին հիւանդացել են 5 տղ. 3 կ. և 1 աղջիկ. մեռել են 1 տղ., 1 կ. և 1 աղջ. Հիւանդ մնում են 2 տղ. և 1 կին, որոնք առողջանալու ոյս են տալիս։

Յուլիսի 2-ին Թիֆլիսի Նահանգապետ բանից Մեռելի հիւանդանոցը տարուած խոլերայով հիւանդ-Մաշմեդ-Հուսէյնն կատանաւորն առողջացել է։

ԲԱԳՈՒԻ Նահանգապետութ հաղորդում է, որ յուլիսի 11-ին հիւանդանոցն են ուղարկուած 10, մեռել են 3, առողջացել են 7, մնում էին 89. հիւանդանոցից դուրս մեռել են 7. Նահանգում հիւանդացել են 128, մեռել են 101, առողջացել են 54. պետուրական հիւանդանոցն են ուղարկուած 2, կան 30. բանտում մեռել է 1, առողջացել է 1, կան 9.

Յուլիսի 12-ին հիւանդանոց են ուղարկուած 8, մեռել են 3, առողջացել են 12, մնում էին 82. հիւանդանոցից դուրս մեռել են 6. Նահանգում հիւանդացել են 188, մեռել են 140, առողջացել են 14, մնում են 94; գի-

նաւորական հիւանդանոցում կան 30. բանտում հիւանդացել է 1, մեռել է 1, առողջացել են 3, մնում են 8.

—

ԳԱՆՁԱԿԻ նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 11-ին Շուշում հիւանդացել են 9, առողջացել են 3, մեռել են 2, մնում էին 2. գաւառում հիւանդացել են 31, առողջացել են 16, մեռել են 13, մնում էին 4.

Գանձակում հիւանդացել են 31, առողջացել են 15, մեռել են 11, մնում էին 15. գաւառում հիւանդացել են 26, առողջացել են 5, մեռել են 29, մնում էին 7.

Նուխում հիւանդացել են 14, առողջացել են 3, մեռել են 8: մնում էին 16. գաւառում հիւանդացել են 2, մեռել է 1, մնում էին 2.

Ջիբրայէլի գաւառում առողջացել է 1, մնում են 2.

Ջիւանշիրի գաւառում հիւանդացել են 24, առողջացել են 5, մեռել են 11, մնում են 19:

Արէշի գաւ. հիւանդացել են 17, առողջացել են 2, մեռել են 5, մնում են 16.

Զանգեզուրի գաւ. հիւանդացել են 37, առողջացել են 12, մեռել են 19, մնում են 10.

Գանձակի նահանգում հիւանդների թիւն է ընդամէնը 116.

—

ԴԱՂՍՏԱՆԻ նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 11-ին Շուրայում մեռել է 1, առողջացել է 1. Պետրովսկում հիւանդացել են 9, մեռել են 5. շրջաններում հիւանդացել են 193, մեռել են 90, առողջացել են 53: Հիւանդ մնում են՝ Պետրովսկում 31, Դերբենդում 2, շրջաններում՝ Քիւրինի 136, Կայթաղ-Թաբասարանի 52, Սամուրի 95, Դարգի 19, Կազիկումուխի 32, Շուրայի 132 և Գունիբի 1.

—

ԵՐԵՒԱՆԻ նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 11-ին Նախիջևանում հիւանդացել են 12, մեռել են 4. գաւառներում մեռել են 3.

—

ՔՈՒԹԱՅԻՍԻ նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 12-ին Բաթումում խոլերայից մեռել է Ռեազանի նահանգի բնակիչ Լոխաշվիլին.

Անցեալները Միքայէլեան հիւանդանոցի գլխաւոր բժիշկ Հոլքգը ուր հարկն է հեռագրել էր, որ խոլերայով հիւանդների համար քաղաքային ժամանակաւոր հիւանդանոցները (բարակները) բացուին, որովհետև Միքայէլեան հիւանդանոցում խոլերայով հիւանդների թիւը որոշուած 30-ից անց է: Այժմ որոշուած է այդ ժամանակաւոր հիւանդանոցները բաց անել միայն այն ժամանակ, երբ Միքայէլեան հիւանդանոցում խոլերայով հիւանդների թիւը 40-ի կը հասնի:

—

Թիֆլիսում տներում բժշկուող խոլերայով հիւանդների թիւը հետզհետէ շատանում է շնորհիւ այն անհեթեթ լուրերի, որոնք քաղաքումս տարածուած են հիւանդանոցների բժշկութեան վերաբերմամբ: Տներում հիւանդները, ինչպէս մեզ հաղորդում են, շատ անգամ յարմարութիւն չեն ունենում թէ բնակարանի, թէ խնամողների և թէ ընդհանրապէս դեղերի և այլ բժշկական միջոցների վերաբերմամբ, այնպէս որ գործ դրած միջոցներն էլ ոչինչ չեն օգնում: Մինչդեռ տներում բժշկուողներն իրենց կողմից վարակում են իրենց ստնեցիններին և հարևաններին և պատճառ են դառնում խոլերայի տարածմանը: Եւ կարծում ենք, եթէ վերջերս Թիֆլիսում խոլերան քիչ ու շատ սաստկանում է, դրա գլխաւոր հանգամանքներից մէկն էլ տներում եղած բժշկութիւնն է:

—

Պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ խոլերայի յայտնուելու օրից մինչև յուլիսի 14-ը Թիֆլիսում խոլերայով հիւանդ եղել են ընդամէնը 230 հոգի, այդ թւում հաշուած թէ եկւորներին, թէ հիւանդանոցներն ուղարկուածներին և թէ տներում բժշկուողներին:

—

Թիֆլիսի քաղաքագլխի կարգադրութեամբ խոլերայով հիւանդների համար որոշուած ամէն մի առողջարանական կառքի վրայ նշանակուած են առանձին առողջապահներ, որոնք պէտք է այդ կառքերի մօտ լինեն միշտ և հարկ եղած միջոցին անմիջապէս խոլերայով հիւանդների մօտ գնան:

—

Չնայելով որ արգելուած է Կուրից ջուր վերցնել թէ խմելու և թէ բաղնիքներու համար, բայց և այնպէս Կուրի վրայ և մօտիկ գտնուած տների բնակիչները շարունակ Կուրից ջուր են վերցնում: Հասարակ ժողովուրդը մինչև այժմ դեռ այնպէս է հաւատացած, թէ Կուրի ջուրն աւելի առողջարար է, քան թէ քաղաքային ջրանցքի ջուրը, և նա գետի ջուրը գործ է ածում մինչև անգամ առանց եփ տալու, կրկնելով առածը թէ «ջուրը կեղտ չի վերցնիլ»: Շատ անգամ պատահում է, որ երբեմն թէ գետի աւելի մաքուր տեղից ջուր վերցրած լինելու համար, աշխատում են ոչ թէ գետի եզերքից ջուր վերցնել, այլ որքան կարելի է՝ մէջտեղից: Դրա համար, ինչպէս մեզ հաղորդում են, նստում են քաղաքային լաստի (պարոմ) վրայ, գալիս են գետի մէջտեղը և այնտեղից ջուր վերցնում և այսպիսով լաստը ծառայում է գետից ջուր վերցնելու համար իբրև մի միջոց. և լաստի վրայ ծառայողներն առատ կերպով թոյլ են տալիս այդ անելու, շատ անգամ նոյն իսկ գետն անցնողներին սպասել տալով: Հրաւիրում ենք ում անկն է ուշադրութիւնն այս բանի վրայ:

—

Ինչպէս յայտնի է, երկաթուղու գծով Թիֆլիսից Բաթում գնացողներին Բեժաթուբանի և Միխայլովօ կայարաններում դեզինֆեկցիայի են ենթարկում. շատերը, դեզինֆեկցիայից ազատուելու համար, ինչպէս մեզ հաղորդում են, Թիֆլիսից Բաթում գնալու համար անմիջապէս մինչև Բաթում չեն վերցնում տոմսակը, այլ մինչև Գորի կամ ուրիշ կայարան, որտեղ խոլերա չկայ, և այնտեղից նոր տոմսակ են վերցնում մինչև Բաթում և ճանապարհ ընկնում ոչ իբրև Թիֆլիսից, այլ իբրև Գորուց կամ այլ տեղից գնացողներ, որոնց դեզինֆեկցիայի չեն ենթարկում:

—

ԼԱԳՈԴԵԽԻՑ.— Յուլիսի 10-ին մեր շրջակայքում սաստիկ կարկուտ եկաւ, որից վնասուեց մինչև 50 դեսեատին ցանուած ծխախոտ մօտ 150,000 ր. արժողութեամբ. շատ մարդիկ մնացին առանց ապրուստի: Այստեղի շրջակայքում ցանուած է մինչև 150 դեսեատին ծխախոտ:

—

ԹԵԼԱՒԻՑ «Нов. Об.»-ին գրում են, որ Կախեթի հայոց բարեգործական ընկերութեան այնտեղի ճիւղը քաղաքին առաջարկել է խոլերային հիւանդանոցին իր հաշուով 10 մահճակալ տալ:

—

ԲԱԹՈՒՄԻՑ.— Բաթումում օրական 2 պուդ ախտահանական դեղեր հայլու թէ փճացնում: Այս օրերս մինչև անգամ մի քանի օր մնացինք առանց կարբոլեան թթուի:

— Յուլիսի 3-ին մի խմբէլ կառապանի 20 կ. համար ատրճանակի մի հարուած ցերեկով քաղաքի մէջ սպանեց, իսկ 5-ին մի խռովարար ատրճանակի երեք հարուածով իւր խանութում գետին տապալեց խանութի տիրոջը, յետոյ ինքն իրեն սպանեց դաշոյնով, Նոյն օրը գիշերուայ ժամի 11-ին հրացանների ճայթիւնները իմաց տուին, որ գողերը մտել են անցած վաղուց Արքամաշուեղի քաղաքային տանը կողոպտելու նպատակով: Աւազակների թիւը 4 է եղել և յուսադէմին չարան էլ բռնուեցան:

—

ԶԱՔԱԹԱԼԻՑ.— Զաքաթալի գաւառում խոլերային դիմադրելու համար խիստ միջոցներ են գործ դնում: Բաքուից, Նուխուց կամ այլ տեղերից այստեղ եկածներին 14 օրեայ կարանտինի են ենթարկում: Արդէն հիւանդանոցի համար բերել են տաել մահճակալներ, անօթներ, դեզինֆեկցիայի համար դեղօրայք և պարագաներ: Քաղաքի պրիստաւ պ. Վլասկին ոչ մի ջանք չէ խնայում քաղաքը կամ նրա շրջակայքը մաքուր պահելու: Զաքաթալան լինելով զինուորական գրութեան մէջ, այստեղ ամէն մի օրէնք շատ խստութեամբ է գործ դրւում: Շնորհիւ խստապահանջ կարգապահութիւնների, քաղաքի օրինակելի մաքրութեան և բարեխառն կլիմայի, յոյս կայ, որ քաղաքը խոլերայից զերծ մնայ կամ թէ հակառակ դէպքում շատ չնչին զոհեր ունենայ:

— Հացաբոյսերը այս տարի խիստ առատ են, նոյնպէս պտուղները ծառերը ծանրաբեռնուած են մեծաքանակ պտուղներով: Շերամապահութիւնը այս տարի բաւականաչափ յաջող է անցել: Տեղական վաճառականները մեծ քանակութեամբ կոկոն են ժողոված: Նուխու մետաքսի քաշելու գործարանները խոլերայի պատճառով դադարեցրած լինելով, կոկոնները դեռ չեն վաճառուած:

— Մելիքեան գաւառի հայոց լեզուի ուսուցիչ Թ. Աստուածատուր քահանայ է ձեռնադրուած քաղաքիս վրայ. իսկ ատաղձագործ ուսուցիչ պ. Գ. Մուրադեանը մի քանի օր առաջ ուղևորուեց ս. Էջմիածին կաթողիկոսութեան ընտրութեան. վերջինիս ուղևորութեան ժամանակ շատ մեծ հանդիսական ցոյցերով ճանապարհ դրին և քաղաքիցս քիչ հեռու գտնուող ճանապարհի վրայ Կաւթէս գիւղում Զաքաթալի հասարակութիւնը և պատուիրեց իրենց բազմաչարչար յարգելի ուսուցչին ճաշ տուեց:

—

ՎԵՐԻՆ-ԴԱՓԱՆԻՑ (Զանգեզուրի գաւառ).— Ընթերցողներին յայտնի աւազակապետ Նարին յունիսի 16-ին իւր վեց ընկերներով եկել է Դավանի Ֆիրզովգան կոչուած սրբատեղում ուխտ արել, որտեղ բանի կերպով ձիերին նայել է տալ, այնտեղից անցել է Կունեց մէջը, Դաշտան գիւղի առաջին իջել, յետոյ գիւղի նախրից մի լաւ կով բռնել մորթել, թէյ, շաքար պահանջել, լաւ քէֆ արել ու այնտեղից վերադառնալով Ֆիրզովգանի սարում թուրք օբաներում մի գիշեր մնացել: Յունիսի 21-ին առաւօտ վաղ գնացել է Չէյվայ բերդը և բոլոր անցնողներին տանելով ձորը, Գեղուայ գետի վրայ, այնտեղ ժողովել: Անցորդներից երեքը մնում են կապանդուած մարդկանց վրայ հսկելով, որ չփախչեն, իսկ երեքը ճանապարհի անցքը կտրում են և շարունակում են անցորդներին յետոյ արգելանոցը հաւաքել: Այդպէս ամբողջ օրը, ինչպէս ասում են, մօտ 300 մարդ են ժողովել այնտեղ: Կէս օրին մօտ երեք ժամ առաջ գալիս է նոյն ճանապարհով նահանգական դատարանի անդամ Մոլոսովը իւր թարգմանչի հետ և գանձարանի ագենտ Ախլևևը. աւազակները իրենց կապանդուածներով զբաղուած լինելով, նրանց չեն տեսնում և նրանք անվնաս անցնում են գնում: Դրանցից յետոյ գալիս է Տաթևի վանահայր Անանիա վարդապետ Համազասպեանը իւր քարտուղարով և ձիաւորներով. հայր սուրբին առաջ փառաւոր իւրայինների հետ ձիերից իջեցնում են, տանելով վերարկուները զրաւում, քէֆները հարցնում: Աւազակապետ Նարին իւր կեանքից գանգատւում է, ասելով, որ ինքը աւազակութեան մէջ մեղաւոր չէ, միւսներն մեղաւոր են, որոնք իրեն կապանդուարել են և հետամուտ են լինում, որ իրեն բռնեն. դրա համար զարթրած աւազակապետութեամբ է պարապում. յետոյ, ինչպէս հայր սուրբն է պատմում, շատ անխաղաղ նրանից 300 րուբլի փող է պահանջում. հայր սուրբը գրպանից հանում է թղթապանակ, որի մէջ 27 ր. է լինում, տալիս է նրան և ասում է, որ միայն այդ է և քչութեան համար ներողութիւն է խնդրում. յետոյ տանում են քարտուղարի մի հատ Բերդանի հրացանը, մի հատ արծաթէ թօսխան և 3 րուբլի փող և այդպէս բոլորից առնում են, ինչ որ արժէքով բաներ են լինում: Դրանից յետոյ գործած այնտեղ են բերում մի անասնաբոյժ, որի հրացանը խլում են: Մասոյանց յիշել, որ ամենից առաջ բռնողի թարգմանին են բռնել և նրան լաւ կոտորելուց յետոյ պատուիրել են բռնելին տանել, որ համարձակուի Նարու ինքը բռնութեան ենթարկել: Նոյն թարգմանի Հաջի-բէկի միջոցով գրել են պրիստաւին, որ չհետևի աւազակներին կապանդուարելու, հետևանքը վատ կլինի և այն պաշտօնեաներին, որոնց նշանակել են ճանապարհների վրայ ճանապարհորդներին պաշտպանելու, սպառնալիքներով, որովհետև նրանք աւազակներին չեն կարող կապանդուարել, միայն ժողովրդի համար աւելորդ նեղութիւն են. իրենք խօսք են տուել նամակով, որ մէջը լաւ կը պաշտպանեն թէ միայն պաշտպանները չլինեն: Բոլորից յետոյ բերել են էլի այնտեղ Մայսոսովի ագենտ թարգմանի ճամբրակը, որի միջի փողը և բոլոր հագուստը առել են, բայց գործերից, որովհետև խնդրել են ժողովրդին այնպէս ենթադրելով, թէ այդ գործերի մէջ գուցէ այնպիսիները կան, որոնց փչացնելը վնաս կարող է լինել ժողովրդին: Կարապետեանների մէջ լինում են շատ թուրք կանայք, բայց կանանցից պատուել են, չեն կողոպտել: Կարապետեաններից որի ձին լաւ է և գեղ՝ իրենց ձիերի հետ փոխել են. հայր սուրբի ձին էլ լաւ է եղել. աւազակի մէկը եկել է, որ առնէր յետ տանէ, բայց այնպէս կապուած լինելով չի կարողացել. հայր սուրբը բարկացել է իւր ծառաների վրայ, թէ ինչու են թողնում, որ աւազակը նեղութիւն քաշէ, թող իրենք շուտով յետ անեն սանձը և ձին տան իրենց. բայց քառ աւազակի խնդիրը լսելով, աւազակապետը հայր սուրբի ձին չէ առնում: Այդպէս բոլորին բաց կարգին կողոպտելուց յետոյ պահել են, մինչև լաւ մթնել է, յետոյ Նարին բոլոր կողոպտուածներին ժողովել է իւր շուրջը կանգնեցնել և սկսել է ճառ կարդալ գլխներին, թէ խելօք կացէք և այլն. վերջացնելիս բոլորից ներողութիւն է խնդրել, որ վատ է վարուել, և ով ձի չէ ունեցել, նրան տեսել է իրենց ձիերի վրայ, գնա անցկացրել և ասել է, որ այդ կինը կռուած մինչև շատ կը տեսնեն: Արքատաւ Աղամալովը և Նախիբեկի իրենց ձիաւորներով հետամուտ են լինում աւազակներին: Յոյս ունինք, որ կը կարանաւորեն:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ, 3 յուլիսի.— Գրելս վերցնելով, ես էլ սկսում եմ սովորական եմ սկսել խոլերայից. էլ ուրիշ չկայ, էլ թղթակից չկայ, որ դրա մասին չխօսէր, չգրէր:

Սարսափահար ժողովուրդը չգիտէ, ուր գնայ, ուր գտնէ այնպիսի մի անկիւն, որտեղ մուտք չգործէր այդ անկոչ հիւրը: Պարսկաստանից փախչում էին Անդրկովկասեան երկրները, այնտեղից—Բաքու և Աստրախան. այստեղ խոլերան սաստկացաւ, փախչողներն իրենց հետ տարածեցին և հիւանդութիւնը, որոնց որ գնացին—վարակեցին. վարակուածները մեռնում են, առողջները փախչում և այսպիսով շուտով ամէն տեղ կը ցրուի այս ախտը: Այդպէս է եղել գրեթէ միշտ: Բայց կան տեղեր, որոնց խոլերան երբէք չի ունեցել. այնպէս որ. Ֆինլանդիան, Պետերբուրգի մի քանի քաղաքներ և այլն: Կան մի քանի քաղաքներ, ուր համեմատաբար շատ քիչ զոհ է տանում այս հիւանդութիւնը. դրանց թւին պատկանում է և Նոր-Նախիջևանը: Մանաւանդ այդ այժմ աչքի է ընկնում, երբ մենք համեմատում ենք այդ քաղաքը Ռոստովի հետ. Տեղացի բժիշկներն ասում են, որ խոլերայի ժամանակ միշտ՝ եթէ Ռոստովում մեռնում էին 50—100 հոգի, Նոր-Նախիջևանում միայն 3—5 հոգի: Այդ այն պատճառով է, որ բնակութիւնը խիտ չէ, համեմատաբար մաքուր է քաղաքը և վերջապէս քաղաքիս մէջ եռուն կեանք չկայ:

Եթէ, օրինակ, մի ճանապարհորդ մի-երկու ժամ մնայ Նախիջևանում, անշուշտ զարմացած կը մնայ տեղական կեանքի մեռելութեան վրայ,—ոչ շարժում, ոչ աղմուկ, ոչ առևտուր. զարմանալի է: Ամենաչնչին, բայց միևնոյն ժամանակ ամենակարևոր բանի համար Նախիջևանցին սովորաբար է գնայ Ռոստով: Վերջին քաղաքի անունը շատ է լսւում թղթակցութիւնների մէջ, այդ պատճառով ինչ է ներկայացնում այդ Ռոստովը. բաւական մեծ քաղաք է—մօտ 100 հազար բնակիչներով: Կարելի չէ ասել, որ ամէն ազգի ներկայացուցիչներ չկան այս քաղաքում՝ ռուսներ, «հօխոլներ», (յոյներ), հրեաներ, հայեր, եւրոպացիք և ամերիկացիք: Հայերը գլխաւորապէս Նոր-Նախիջևանից են և կազմում են հարուստ վաճառականական դասը. մի քանի ամենամեծ ֆիրմաները հայերին են պատկանում: Բայց կան այնտեղ և անդրկովկասցի գաղթական հայեր գլխաւորապէս մրգեղէններով առևտուր անողներ, կան և սրանց մէջ բաւական հարուստներ: Հայերի այս մասը աւելի համակրելի է, նրանք սրբութեամբ պահպանում են իրենց մայրենի լեզուն և հաւատքը և պէտք եղած ժամանակ, կարողութեան չափ, օգնում են իրենց կարօտեալ եղբայրներին: Արդարև թանգ է սրանց համար ամէն մի ազգային գործ, երևում է, օրինակ, նրանից, որ նրանք միշտ ուրախութեամբ յաճախում են հայոց ներկայացումները Նոր-Նախիջևանում. ուրեմն որքան լաւ գործ կլինէր, եթէ այդ ներկայացումների թիւը շատանար: Ռոստովի հայերը այնպէս թէ այնպէս հարկաւոր է համարել Նախիջևանցի հայեր, որովհետև Ռոստովի հասարակական գործերի վրայ նրանք ոչ մի ազդեցութիւն չունին ինչպէս և, բայց վաճառականութեան ասպարէզից, ուրիշ գործերում ոչ մի ձայն չունին այն պատճառով, որ և թուով շատ քիչ են և, միւս կողմից, քանի գնում—կորցնում են իրենց հայութիւնը: Օրինակ, Ռոստովի ամառանոցում սովորում են լապտերներ՝ ռու-

ռուսերէն, փրանսերէն, գերմաներէն, յունարէն, և մի լաւակը՝ հրէաների օրինակ,—բայց չէ ստացւում հայերէն ոչ մի թերթ, մինչդեռ ակումբն ունի 20—30 հազ. անդամ։

Ինչ կասի առել, որ Նախիջևանի ակումբը ընդհանրապէս ստանում է Կովկասում լոյս տեսնող բոլոր պարբերական հրատարակութիւնները։

Ի դէպ, մի քանի խօսք մեր մատենադարանի մասին։ Դա քաղաքային մատենադարան է, քաղաքիս բոլոր բնակիչների համար. այնտեղ մօտ 900 ռուսերէն և 374 հայերէն գիրք կայ։ Ես արդէն մէկ անգամ գրել էի, որ մատենադարանի հսկողութիւնը հանձնուած է այնպիսի մի անձի ձեռ, որ ի մօտոյ ծանօթ լինելը գրականութեան և ոչ թէ, ինչպէս ասում է ա-ռածը, «գիտակի ծանօթութիւն» ունենալ։ Քաղաքը ամեն տարի որոշ գումար է յատկացնում նոր (մօտ 200) գիրք գնելու։ Նախ այդ գումարով հարկաւոր է գնել թէ հայերէն և թէ ռուսերէն գրքեր, մինչդեռ այս տարի ոչ մի հայերէն գիրք չէ գնուել. այդ արդէն ցոյց է տալիս թէ ինչ անտակ հոգս է տանում մատենադարանի պ. հսկողը (չգիտեմ նրա պաշտօնը ինչպէս է կոչւում)։ Նա գնել է բաւական ռուսերէն գրքեր, բայց էլի կրկնում եմ՝ ընտրողութիւնը գոհացուցիչ չէ. գնուած են անպէտք գրքեր, չեն գնուած նոր հրատարակուած և պիտանի գրքեր։ Դառնանք հայերէն գրքերին։ 374 գրքերից կարելի է առել քառորդը անպէտք են և երբէք չեն կարդացւում. դրանք գլխաւորապէս Վիեննայի հրատարակութիւններ են։ Հայերէն գրքերի ցուցակը դեռ չի տպուած (այս քանի տարի է), ցուցակի մէջ չկան մի քանի գրքերի անունները, չնայելով որ նրանք կան մատենադարանում։ Միւս կողմից՝ մատենադարանը չունի շատ և շատ պիտանի գրքեր, մանաւանդ նոր հրատարակութիւններ։ Այսպիսով, մատենադարանի հայկական մասը, ինչպէս տեսնում է ընթերցողը, անխնամ է թողնուած։ Եթէ Ն. Նախիջևանում առհասարակ լուսաւոր կողմերին, ան չուշա նրանք արդէն ուշադրութիւն դարձրած կլինէին այս կէտի վրայ, որի մասին խօսել ենք ես և ուրիշները։

Գործին գլուխ կանգնողները իրենց անտարբերութիւնը դէպի մատենադարանի հայկական մասը բացատրում են նրանով, որ հայերէն գրքերը շատ քիչ են կարդացւում։ Անշուշտ այդ պատճառը կարող չէ նրանց արդարացնել. հենց այդ սակաւաթիւ ընթերցողների համար էլ լինի—նոր գրքեր ձեռք բերել անհրաժեշտ է։ Իրաւ է, այժմ շատ քիչ են կարդում հայերէն։ Օրինակ՝ մատենադարանապետ ասում է, որ ամենաշատը շաբաթը 2 հայերէն գիրք են միայն պահանջում. մատենադարանի մատեանից ես տեսայ, որ հայերէն գրքեր կարդացողներն են՝ գլխաւորապէս աշակերտները, ուսուցիչները, ուսուցչուհիները, քահանաները և մի երկու օրիորդներ (Կոկոյեան ուսումնարանում ուսած)։ Անշուշտ ցաւալի է այս երևոյթը։ Բանասէրները, որ 30 տարի առաջ առել էր այս խօսքերը, կատ է այժմ.

Իմա՛ս սանէ՛ք ...
...

Մինաս.

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ գաւառ, 5 յուլիսի.— Խոլերան համարեա միաժամանակ Բաքուի հետ հասաւ Զանգեզուրի գաւառը, միայն այն տարբերութեամբ, որ մեզնում յայտնուած խոլերան թեթև տեսակից է։ Բաքուում պաշտօնապէս յայտնուեցաւ յունիսի 6-ին, իսկ երկու օր յետոյ, այն է նոյն ամսի 8-ին խոլերան երևեցաւ Զանգեզուրի մի քանի գիւղերում։ Համաճարակի այսպիսի շուտ տարածուելու պատճառը մեզնում գիւրին հասկանալի կը լինի, եթէ ի նկատի ունենանք մարդկանց այն մեծ հոսանքը, որ ամեն տարի Բաքուից դէպի Զանգեզուր՝ խոլերայի աշխարհը ձգւում է և որը շարունակւում է և այսօր։ 8—10 տարի կորած-մոլորած պանդուխտ Զանգեզուրցին այժմ, խոլերայի շնորհիւ, երկար պարծրած դէպի հայրենիք, բոլոր ուժով շտապում է իր հարազատների մօտ, բերելով իւր հետ նրանց համար մի մեծ պարգև՝ իր գրպաններով խոլերայի բացիլներ...

Այժմ Զանգեզուրի ամեն մի գիւղում տարածուած է խոլերան։ Աւելորդ է յիշատակել այստեղ մի քանի գիւղերում, այն է՝ Բարաղունիքում, Խնձորեսկում, Գորիսում և Շինուհայրում մի քանի մահացու դէպքեր եղան. վերջինում մահացու դէպքերի թիւը շատ է, հասնում է 15-ի։ Թէպէտ, ինչպէս վերև յիշեցի, այստեղ խոլերան թեթև տեսակից է, բայց, ընդհանուրի կարծիքով, քանի գնայ կը սաստկանայ, որովհետև գեռ առաջներս ունենք ամառուայ խիստ շոգերը և, որ գլխաւորն է, Զանգեզուրի գաւառն ամբողջապէս թաղուած է անմաքրութեան մէջ։ Ժողովուրդն ապրում է խիստ հակաառողջական պայմանների մէջ. Նա գիտակցութիւնից և ինքնաճանաչութիւնից հեռու է եղել, է և այժմ, մինչև անմաքրասէր է եղել և այսօր էլ նոյնն է։ Մարդ անձամբ պէտք է տեսնի գիւղ գիւղ և իր աչքերով տեսնէ ու համոզուի, թէ ինչ յոռութեան մէջ են Զանգեզուրի գիւղերը։ Գիւղերի տեղը ու դանդաղ տեսակ անմաքրութեան կողմերը երևակայեցէք Լեմքեան մի քանի աշխարհներ, որոնք որ օրի վրայ աւելանում են և ոչ թէ պակասում։ Եւ ինչ հարկ կայ պակասելու, քանի որ խոլերան «մարդկանց մեղքերի համար Աստուածանից ուղարկուած մի պատիժ է»։ Առողջապահական կարգ ու վերահսկողութիւնը դեռ գոյութիւն չունին մեր գաւառում, բժշկութիւն շատ հեռաւոր է, խոլերան հեռանալուց յետոյ գոյութիւն ունենան։ Զանգեզուրի այս աշխարհին գաւառն ունի մի գիւղական և մի գաւառական բժիշկ մի քանի ֆելդշերներով։ Արդեօք դրանք ինչ կարող են անել ներկայ համաճարակի դէմ, այն էլ մի այնպիսի գաւառում, որտեղ գիւղերը մէկ մէկուց հեռու են գտնւում։

Քաղաքների պէս Գորիսումն էլ շինեցին հիւանդանոց փոքրիկ սակ, սակայն մինչև օրս ոչ մի հիւանդ չէ եղած այդ ժամանակաւոր հիւանդանոցում։ Եւ չի էլ լինի, եթէ ի նկատի ունենանք, որ գիւղացիներն այն անմիտ կարծիքին են՝ իբր թէ խոլերայով հիւանդացածին հիւանդանոցում բժիշկները դեղ են տալիս սպանում։

Բ.

ՆԱՄԱԿ ԱՒՍՏՐԻԱՅԻՑ *)

ՎԻԵՆՆԱ, 26 յունիսի / 8 յուլիսի.— Աւստրիական լեհաց սկսում է լեհական մասը։

Polnische Kunst Musik und Drama լեհական գեղարուեստական արտադրութիւնները ոչ պակաս զարգացած են։ Բազմաթիւ ապարդիւնք պիեսներ, ամեն Ճիւղերի մասին, ձեռագիրներ երգերի և յուռութքային նոտաներ հեղինակների, անցեալ ժամանակների իշխանների, արքաների մեծադիր, երգերի, չքեղ նկարներ։ Զարդանկներ փայտից, ոսկուց, փղոսկրից շինուած։ Յիշատակը (անթուանի տեսակ) ինչպէս երևում է մեծ յարգի են եղած հնում։ Մի գաւ սրանից առ չնչ ... ցեղ ... նոր քանդակներ ունին։

Ֆրիդրիխ Շուբերտի երգերի նկարը կոյ և այսուհետ։ Կան Ադամ Միցկեւիչի (1798—1855) և այլ նշանաւոր անձերի մեծադիր նկարները։ Լեհական բաժնով վերջացնելով արդէն վերջանում է Rotunde-ի մէջ գետեղուած գեղարուեստական բաժնյմազան արտադրութիւնների համառօտ նկարագրութիւնը։

Այժմ պետք դառն մասը նկարագրել, որ նոյնպէս կազմում է ցուցահանդէսի մի ճիւղը։

Միչդրից մտնելով ցուցահանդէսի, այդտեղ տեսած, հրապարակը, ձախ կողմը մի թէև փոքրիկ, բայց գեղեցիկ շինութեան մէջ Վիեննայի յայտնի Gosef Eberle և ընկ. ֆիրման է տեղաւորած։ Ծախում է հաշմելոր երաժշտական աշխատութիւնները,—պիեսներ, օպերաներ, նոտաներ ամեն լեզուով։ Մի սենեակում ներկայ կայ ... Ֆրանց Իոզէֆի երգերի նկարը այդ կողմը կախ են տուած Ֆրանց Լիստի, Մոցարտի և Վագների և ձախ կողմը՝ Բեթհովէնի, Շուբերտի և Գլիւկի նկարները։ Մատուցահաշտ օրինակները խնդրում, պատրաստ են, որ այցելուն մի բան գնէ։

Զգաստ Rotunde-ին, աջ կողմը տեղաւորած է հին Վիեննան։ Այստեղ թէ և տանձնատեխ 10 կրկեսներ մօտոք են նշանակել, բայց այցելուներ շատ են լինում։

3—4 հարիւր տարի սրանից առաջ Վիեննան ունեցել է փոքրիկ տներ, այնպէս մինիմոնց մօտ, կարծես մէկը միւսի մէջ բուսած։ Տները 3 յարկանի են, սրածայր կտուրներով, ծածկուած։ Լուսամուտները շատ փոքր են. Հետաքրքիր է տեսնել կտրատուած և կպցուած ապակիներով երեք-յարկանի տները, ներքև կիզասանենեակ ... Տներից մի քանիսի վրայ կան թէքական մինարէթների տեսակները, կոյր, բարձր սրածայր վերջացող ... Գմբէթաւոր տան ծայրին մի 5 վերշոկ քառակուսի մի ծովնեամբ լուսամուտ է բացած։ Հասարակութիւնը մեծ հետաքրքրութեամբ գնում է իր պապերի հին բնակարանների մօդելները։ Ներքև փողոցների լուսամուտներում կան հին եկեղեցական դանգակներ։ Այս բաժնին թէև հին Վիեննա անունն են տուել, բայց այստեղ լիքը խանութներ են նոր տեսակներով։ Այդ խանութներից մէկում կայ արևելեան խանութի նման մէկը, կեղտոտ, որտեղ մէջը մատում ծախում են ալիւր, չորացրած մրգեր, ընկոյզ, իսկ դրսում տախտակների մէջ գաւ, շաքար և այլ իրեր։ Այդ խանութի նմանն այսօր Կովկասի երբ քաղաք ունի, բայց Վիեննան արդէն վաղուց է գրան արժանի գտել։ Արևելեան ձաշակով մի խանութ գործել են զարդարել, բայց նմանութիւն չկայ բոլորովին։

Հին քաղաքից դուրս մի առանձին փոքրիկ պաւիլիոնում գրուած է ֆրանսիական մի ֆիրմայից մէկ հատ բոլորին նոր պիանոն։ Համեմատի ֆրանսիական պիանոն այս նոր տեսակով աշխատել է, որ չթողնէ ... րել է նրանց գործը. օրինակ ինչ պիես, ինչ բան ես որ ցանկանում ես, նոտը կարող ես գնել իւր համար յարմարեցրած տեղը ու սկսել մի պարանով խաղալ սակեղծները բարձրանալով և ցածրանալով ռտքով գեղեցիկ կերպով անում է և դու հանգիստ կարող ես գնալ քո գործը թողնելով, որ միայն ընդօրինակ ես։

Մոռացայ յիշել, որ Rotunde-ից 50 քայլ հեռու գտնւում է թատրոնական գեղեցիկ քարաշէն շինութիւնը, որտեղ ներկայացումներ են տրւում արդէն։

Արդէն արդի վերջացրած համարից իմ խոստ համառօտ նկարագրութիւնս գեղարուեստական ցուցահանդէսի մասին։

Այժմ մի քանի ընդհանուր տեսութիւններ աւելորդ չէր լինիլ աւելացնել։

Մանրամասն գնահատել երկրեր վրայ գտնուող բոլոր նշանաւոր և անհրաժեշտ երաժշտական գործիքների միտումնականները, օրինակ՝ մեր առաջ կամ թէ համեմատելով խաղալու կամ անգլիականի հետ, կը տեսնէ, որ դրանք միևնոյնն են՝ չնչին տարբերութեամբ։ Միայն, ի հարկէ, ժամանակի ընթացքում խաղալին կամ անգլիացին կերպարանափոխել է, կատարելագործել է արտաքին մասը, իսկ ներքինի վրայ նոր բաներ աւելացրել, միայն հինը առաջնորդ ունենալով։ Այսպիսով մարդ գալիս է այն կարծիքին, որ նախկին մարդիկ, չնչին բացառութեամբ, միմեանց կեանք են վարել եղել, միմեանց ուսանութիւն և ախորժանքն են արտայայտելու եղել։

Ցուցահանդէսին մի քանի պետութիւններ, կարծես քաղաքական նպատակով են մասնակցել։ Այդ թւում նկատելի են մանաւանդ երկու պետութիւններ՝ Գերմանիան և Ռուսիան, որոնք միմեանց սպառաքութիւն են թողնում. թւում է թէ այս ցուցահանդէսը մի մեծ մրցման ասպարէզ է դրանց համար։ Այդ պատճառով այդ երկու պետութիւնների ցուցահանդէսում ի ցոյց դրած իրերից կարելի էր բաւական բաներ դուրս ձգել, առանց մի չնչին վնաս հասցնելու ներքինին։ Նախկին նամակս մէջ յիշած էի, որ կան պետութիւններ, որոնք աշխատել են պատշաճին, տեսողութեան վրայ ազդել. խօսքս վերաբերում էր Գերմանիային և Ռուսիային։ Ֆրանսիական կառավարութեան մասնակցութիւնը, կարծես, թղթական առանց հետևանք՝ մի բան լինի. «Քայլ խաղթը խոչ ոքրին»։ Ուրիշ կերպ անկարելի է մտածել, որ Ֆրանսիան այսպէս չնչին մասնակցութիւն է ցոյց տալիս։

Թէ այսպէս և թէ այնպէս, առաջնական մարդաքաղաքի այս մեծ հանդէսը բովանդակութեամբ, բազմազան տեսակէտից կատարեալ աջողութիւն ունի։ Գիծամարդարար մասերի կողմից միանգամայն անաջող է, այնպէս, որ դժուար թէ տուած յոյսերը իրականանան՝ վնասը մեծ պիտի լինի։ Այցելուների թիւն հենց սկզբից քիչ էր։ Շատերն ենթադրում էին, որ դեռ շատ է, շատ ուշ իրեր պատրաստ չեն և այդ պատճառով այցելուներ քիչ են, բայց այժմ արդէն բացման օրից երկու բոլորակ ամիսներ են անցել, բոլոր բաժինները վերջացրած են, իսկ այցելուների թիւը օրէցօր պակասում է։

Սար. Թագ.

*) Տես «Նոր-Դար» № 117.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Լուրեր են պտտում, թէ գերմանական կանցլեր Կապրիվիի և իշխան Բիսմարկի միջև տեղի ունեցող պայքարի մէջ մեծ դեր է խաղում գեներալ Վալդերզէն, որ աշխատում է այնպէս անել, որ գրաֆ Կապրիվին հեռանայ իր պաշտօնից և նրա տեղն ինքը բռնի։

—Անգլիական պարլամենտական ներկայ ընտրութիւնների հետևանքների վրայ հիմնուած՝ յաղթանակը Գլադստոնի կողմն է համարւում։ «Figaro»-ն աշխատում է գուշակել անգլիական արտաքին քաղաքականութեան ապագան։ Նա ասում է. «Գլադստոնի և լորդ Սալիսբերիի քաղաքականութիւնների միջև կարող չէ մեծ տարբերութիւն լինել, բայց այնուամենայնիւ տարբերութիւն կը լինի։ Պահպանողական կառավարութեան ժամանակ յառաջնադիմութեան դէպի Անգլիան պաշտպանութեանէրի կողմը կը լինէր։ Արմատական կառավարութեան ժամանակ նա չի դուրս գայ չեզոք դրութիւնից։ Ուրիշ խօսքերով, Սալիսբերիի կառավարութիւնը Ֆրանսիայի թշնամիների կողմը կը լինէր, եթէ Ֆրանսիան պատերազմ յայտնէր Գերմանիային, մինչդեռ Գլադստոնի կառավարութիւնը առանձնացած կը մնար ու կողմից էլ որ լինէր յարձակուողը։ Այսպիսով իշխանութիւնը նոր կառավարութեան ձեռքն անցնելը, անշուշտ, օգտակար է Ֆրանսիայի համար, որովհետև լորդ Սալիսբերին կարող էր նրան վնասել և այն դէպքում, եթէ յարձակուողը Գերմանիայի կողմից լինէր։ Ինչ հետևանք էլ որ ունենար եւրոպական այդպիսի պատերազմը, Անգլիան երբէք Ֆրանսիայի հետ չի լինի։ Բայց եթէ իշխանութիւնն անցնի արմատական կուսակցութեան ձեռքը, գոնէ Ֆրանսիացիք կարող են համոզուած լինել, որ Անգլիան չի դուրս գայ իրենց դէմ»։

—Ռումինիայի կառավարութիւնը աւստրիական մի զինագործարանում 100 հազար Մանլիխերի հրացան է պատուէր տուել, որոնք 4 ամսուայ ընթացքում պատրաստ պիտի լինին։ Միևնոյն ժամանակ Վիեննայում 52 միլիոն փամփուշտ է պատուէր տուած։

—Հաղորդում են, երևում է, որ իտալական արքունի գանձարանը ներկայումս 500 միլիոն լիր պարտք ունի։ Պետական այդ աճող պարտքը մեծ հոգացողութեան առարկայ է մանաւանդ, որ ոսկի ամենևին չկայ, իսկ արծաթ փողը հետզհետէ պակասում է։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յուլիսի.—Ռուսաստանի շրջանները են ուղարկուած պատրաստի խորաներ խոլերայով հիւանդացողների մասին պաշտօնական տեղեկութիւններ միջոցների մասին։

Կ. Պոլսից Պետերբուրգ հասաւ դեսպան Նելիդովը։

Յունիսի 28-ին Գորիսում, Աւլադի շրջանի, գիւղերի մէջ, նոյնպէս և Աւչի և Թէջուլաքեայի կարանտիններում և Աստրախանի նահանգի Սամլենկա գիւղում խոլերա է յայտնուել։

Նորից մեռել են Կովկասում 455, Դոնի շրջանում 226, Սարատովի նահ. 177, Աստրախանի նահ. 140, Սամարայի նահ. 105, Սիմբիրսկում 12, Կազանի նահ. և Նիժնի-Նովգորոդում 9—9 հոգի Վորոնեժում և Աերգաչի գաւառում 1—1 հոգի։

Սարատովեան նամակների ասքթիւ Նիժնի-Նովգորոդի նահանգապետը յայտարարում է. «Եթէ որևէ մէկին աջողուի կարգը խանգարել, ես իմ կարգադրութեամբ յանձնուած զինուորական ուժով կը վերականգնեմ այդ կարգը. խռովարարներին ես տեղն ու տեղը կը կախեմ, իսկ անկարգութիւնների մասնակցողները ամենքի աչքի առաջ խիստ կը պատժուեն»։

ՓԱՐԻԶ.—Հաստատում են, որ Տուլոնում խոլերա nostras-ից հիւանդացել են 42 և մեռել են 20 հոգի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

14 յուլիսի.

Լոնդոն 100 90,60 90,90.

Բեռլին 48,97½ 48,00 48,95

Պարիզ 39,67½ 39,62½. 39,65.
Պայտխպերքայ 7 ր. 96 կ. պ. 6 ր. 98 կ. Ծ.
Մաքս. կուպօն 159½ — 160 կ. Ծախ.
Աբծախ . . . 1,08 — 1,10 կ. Ծախ.
Ռօզայֆն պխ . . 4 ր. վինչի 5% Ծախ.
Պետակ.քանկի 5% ասմս.
1-ին շրջանի . . . . 103,½ կ. ասկ.
2-րդ . . . . . 103 12 կ. ասկ.
6-րդ . . . . . 161½ ր. — կ. պ.
100 և 1000ր. ասիգնացիան փոխանակելու 5% ասմսներ.
1-ին շրջանի . . . . . .
2-րդ . . . . . 102,72 ր. — կ. ասկ.
3-րդ . . . . . 104,37 ր. կ. պ.
Առաջին 5% ներքին փոխանակելու ասմսներ
1-ին շրջանի . . . 235½ ր. — կ. ասկ.
2-րդ . . . . . 223½ ր. — կ. ասկ.
Ներքոդր փոխ Պետ. Գոլդ.
բանկի . . . . . 102,37 ր. կ. պ.
5½% բէհնաիր . . . . . կ. պ.
Ֆինք. քաղ. վարկի բոնկր.
օբլեգ . . . . . կ. ասկ.
Բարաթի արձանագրությունը անգործ է.

Պատասխանատու խմբ. Մ. ԱՐԵՂՅԱՆ
Հրատարակիչ՝ Ս. ՍԱՆԴԻԲԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Անդրկովկասեան երկաթուղի

Թիֆլիսից Բաթ. գն. պոստ. 6 ժ. 50 ր. եր.
» » ապր.-մարտ.—9 ժ. 30 ր. առ.
Բաթումից Թիֆլ. հաս. պ. 9 ժ. 52 ր. եր.
» ապր.-մարտ.—12 ժ. 25 ր. ցեր.
Թիֆլիսից Բագու գն. 1 ժ. 20 ր. ցեր.
Բագուից Թիֆլիս հաս. 5 ժ. 50 ր. եր.
Թիֆլիսից Գանձ. գն. 9 ժ. 20 ր. եր.
Գանձակից Թիֆլիս հաս. 7 ժ. 30 ր. առ.

Ռուսաց շոգենաւային ընկերութիւն
Երեւանի Բանուժի, Օկեանոսի եւ Կ. Պոլսի միջեւ
Բանում հրատ է գնում.

Հինգշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 4-ին, ուղիղ ընթացքով Նովոռոսիյսկի վրայով.

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 2-ին ջրանաւուս ընթացքով Փոթիի վրայով բոլոր նաւահանգիստները.

Երկուշաբթի օրերը, երեկոյեան ժամը 7-ին Կ. Պոլիս.

Բանում հանում է.

Երկուշաբթի օրերը, երեկոյեան, Օկեսոսից, ուղիղ ընթացքով Ռոբաթի օրերը, առաւօտեան, Օկեսոսից, ուղիղ ընթացքով Կեբրի և Նովոռոսիյսկի վրայով.

Կիրակի օրերը, առաւօտեան, Կ. Պոլսից.

Պատրոն եւ ապրանքակիր-մարդատար շոգենաւերի ընկերութիւն Փոթիի, Բաթումի եւ Օկեսոսի միջեւ.

Փոթիի հանում է.

Պատրոն մարդատար շոգենաւը Բաթումից երկուշաբթի օրերը լուսաբացին.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Օկեսոսից կիրակի օրերը երեկոյեան.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթումից հինգշաբթի օրերը լուսաբացին.

Փոթիից դուրս է գնում.

Պատրոն-մարդատար շոգենաւը Օկեսոս և Հանապազորեայ գանում նաւահանգիստները կիրակի օրերը, առաւօտեան ժամը 8-ին.

Պատրոն-մարդատար շոգենաւը գործը վերջացնելուց յետոյ երկուշաբթի օրերը Բաթում.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթումից երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 10-ին.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8-ին, Օկեսոս և Հանապազորեայ գանում նաւահանգիստները.

Աբրանդոլի օրերը գիշերուայ ժամը 1-ին.

Բաթումից գուրս է գնում հինգշաբթի օրերը գիշերուայ ժամը 2-ին.

Ապրանքակիր մարդատար շոգենաւերի վայ ընդունում են II և III կարգի ուղեւորներ և առանց ուսերի պայմանների.

Գործակալութիւնը գանուում է Թիֆլիսի ափ. բանկի շինութեան մէջ №№ 117 և 118.

Պատրոն եւ ապրանքակիր-մարդատար շոգենաւերի երեւելի Փոթիի, Բաթումի եւ Օկեսոսի միջեւ.

Փոթիի հանում է.

Պատրոն մարդատար շոգենաւը Բաթումից երկուշաբթի օրերը լուսաբացին.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Օկեսոսից կիրակի օրերը երեկոյեան.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթումից հինգշաբթի օրերը լուսաբացին.

Փոթիից դուրս է գնում.

Պատրոն-մարդատար շոգենաւը Օկեսոս և Հանապազորեայ գանում նաւահանգիստները կիրակի օրերը, առաւօտեան ժամը 8-ին.

Պատրոն-մարդատար շոգենաւը գործը վերջացնելուց յետոյ երկուշաբթի օրերը Բաթում.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթումից երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 10-ին.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8-ին, Օկեսոս և Հանապազորեայ գանում նաւահանգիստները.

Աբրանդոլի օրերը գիշերուայ ժամը 1-ին.

Բաթումից գուրս է գնում հինգշաբթի օրերը գիշերուայ ժամը 2-ին.

Ապրանքակիր մարդատար շոգենաւերի վայ ընդունում են II և III կարգի ուղեւորներ և առանց ուսերի պայմանների.

Գործակալութիւնը գանուում է Թիֆլիսի ափ. բանկի շինութեան մէջ №№ 117 և 118.

Պատրոն եւ ապրանքակիր-մարդատար շոգենաւերի երեւելի Փոթիի, Բաթումի եւ Օկեսոսի միջեւ.

Փոթիի հանում է.

Պատրոն մարդատար շոգենաւը Բաթումից երկուշաբթի օրերը լուսաբացին.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Օկեսոսից կիրակի օրերը երեկոյեան.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթումից հինգշաբթի օրերը լուսաբացին.

Փոթիից դուրս է գնում.

Պատրոն-մարդատար շոգենաւը Օկեսոս և Հանապազորեայ գանում նաւահանգիստները կիրակի օրերը, առաւօտեան ժամը 8-ին.

Պատրոն-մարդատար շոգենաւը գործը վերջացնելուց յետոյ երկուշաբթի օրերը Բաթում.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթումից երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 10-ին.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8-ին, Օկեսոս և Հանապազորեայ գանում նաւահանգիստները.

Աբրանդոլի օրերը գիշերուայ ժամը 1-ին.

Բաթումից գուրս է գնում հինգշաբթի օրերը գիշերուայ ժամը 2-ին.

Ապրանքակիր մարդատար շոգենաւերի վայ ընդունում են II և III կարգի ուղեւորներ և առանց ուսերի պայմանների.

Գործակալութիւնը գանուում է Թիֆլիսի ափ. բանկի շինութեան մէջ №№ 117 և 118.

Պատրոն եւ ապրանքակիր-մարդատար շոգենաւերի երեւելի Փոթիի, Բաթումի եւ Օկեսոսի միջեւ.

Փոթիի հանում է.

Պատրոն մարդատար շոգենաւը Բաթումից երկուշաբթի օրերը լուսաբացին.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Օկեսոսից կիրակի օրերը երեկոյեան.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթումից հինգշաբթի օրերը լուսաբացին.

Փոթիից դուրս է գնում.

Պատրոն-մարդատար շոգենաւը Օկեսոս և Հանապազորեայ գանում նաւահանգիստները կիրակի օրերը, առաւօտեան ժամը 8-ին.

Պատրոն-մարդատար շոգենաւը գործը վերջացնելուց յետոյ երկուշաբթի օրերը Բաթում.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթումից երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 10-ին.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8-ին, Օկեսոս և Հանապազորեայ գանում նաւահանգիստները.

Աբրանդոլի օրերը գիշերուայ ժամը 1-ին.

Բաթումից գուրս է գնում հինգշաբթի օրերը գիշերուայ ժամը 2-ին.

Ապրանքակիր մարդատար շոգենաւերի վայ ընդունում են II և III կարգի ուղեւորներ և առանց ուսերի պայմանների.

Գործակալութիւնը գանուում է Թիֆլիսի ափ. բանկի շինութեան մէջ №№ 117 և 118.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից լոյս տեսան Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերութեան հետեւեալ հրատարակութիւնները.

I.

Ց. Ց. ՊԱՐՈՆԵՒԱՆ.

1. «Հաղոթի ձեռատետրը», 2. «Պատմ մը Պոպոյ թժպերու մէջ» և 3. «Խիկարի գուշակութիւնք» (մի հատորի մէջ ամփոփած), գինն է 1 րուբլի

և

II.

ժողովրդապարական նիւթեր

Գիրք ա.

ՍԱՄՄԱՑ ԾՌԹԵՐ

Սասունցի Դաւիթ

Ժողովրդական վէպի երկու վերիանաներ (Արարատի և Մոկաց բարբառներով)

Գրի առաւ Գարեգին սարկաւագ. գինն է 50 կ.

(Խմբ.) 3 3.

ԼՕՅՕ ՏԵՍԱԻ

ԲԱՓՓԻ

ՎԷՊԻՆՆԵՐ ԵՒ ՊԱՏՏԵՐՆԵՐ

ՀԱՏՈՐ ԱՒԱԳԵԱՆ

Հեղինակի երիտասարդ ժամանակուայ պատկերով։

Գինն է 2 ր., ճանապարհածախքով 2 ր. 25 կ.։

Յանկացողները կարող են գիմել հեղինակի այրին՝ այս հասցէով՝ Тифлисъ, Сергѣевская, № 20 д. Лисицова, Аннѣ Раффи, կամ «Կեդրոնական գրավաճառանոցին

(Խմբ.) 5.—4։

ԿԱՊՈՒԻՆԵՐ

ՄԱՏԻԿՕ ԳՐԻՄՈ ԵՒ ԸՆԿ.

Capsles au Matico)

Պարիզի վեղագործների — Թղլաթրատած է Բաւսթայում։

Այդ կապսիւլները պատրաստուած են Մատիկօի և Կոպայ Բալզամի էսէնցիայից։ Նրանք պատած լինելով մածուցկի կիսալով ոչ մի վատ համ կամ հոտ չեն տալիս նեղուածքին։

Պահանջել Բաւսթայի գլխ. վեղաներում։

(М.) 21—21

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ!!!

"ՎԻԿՏՈՐ ՌԵԻԳՆԻ,,

պարֆիւմերային գործարանի պատկեստում

Է. ԲՕԴԼՕ ԵՒ ԸՆԿ

Մոսկուայում

ՕՃԱՒՈ ՕԼԷՕ-ՎԱՋԵԼԻՆ

ՌՈՅԵԱԼ-ՊՈՆՊՕ!!!

Վաճառւում է ամբողջ Թաւսթայի բոլոր դեպատներում։

(250 շ.) 20—4

ԱԶԴ

ԲԱՐԵՅԻՇՏԱԿ ՅՈՎՍԷՓ ԻՋՄԻՐԼԱՆՑԻ կտակին արամագրութեան համաձայն Սահակ-Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութիւնն տեսի պիտի ունենայ յառաջիկայ տարի յաւուր տօնի Սրբոց Թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ։

Հետապէս այն ամեն հեղինակք ու բանաստեղծք, որ ազգային դպրոցութեան և պատմութեան վերաբերեալ մ՚ և է երկասիրութեամբք կը փափաքին մասնակցիլ այն մրցանակաբաշխութեան, կը հրաւիրուին մինչև յառաջիկայ տարւոյ յունուարի սկիզբն յուզարկել ու Ամեն. Սրբոցման Պատրիարք Հայրն ի Կ. Պոլիս իրենց աշխատութիւններն։

Տպագրեալ երկասիրութիւնք երեք օրինակ պէտք է յուզարկուին, իսկ ձեռագիրք մի օրինակ որք ևս չեն արուիր։

29 յունիս 1892.

(Խմբ.) 5—1

ԱՒԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նապոլեոնյա փողոց, № 9)

Յանկացողք ունենալ իրենց առևտրական գործերի համար անգեալ յունիս ամսում ուսման ընթացքն ստանան ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ, ժամ բարեհաճեն դիմել կուրսերի հիմնադին Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ստուգմնաբանական շրջանի հոգաբարձուի հաստատուած ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ։

Ընդունելութիւնները սկսուելու են սեպտեմբերի 1-ից։ Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծոփանոմների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտար քաղաքացիք դիմում են Тифлисъ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэлянцу.

(319) 5—2

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի *համագրութեան մէջ*

Վաճառւում է

ԳԱԼՈՒՍՏ ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆՑԻ

ՆԻՒԹԵՐ

ԱՂՑԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՄԱՐ

Վերնագրով գիրքը, որ պարունակում է իր մէջ Պարսկաստանի ԵՐԵՒԵԼԻ ՀԱՅԿԱԶՈՒՆՆԵՐԻ կենսագրութիւնն ընդ նմին բազմագան և բազմաթիւ տեղեկութիւններ Պարսկաստանի Հայոց անգիր պատմութեան վերաբերեալ, այլ և պարսկական արքունեաց և պալատան ներքին և արտաքին արարողութիւնների ու կենցաղավարութիւնների նկարագիրը և նրա ներքին գաւառների և ցեղերի մասին կարևոր ծանօթութիւններ։

Այս մեծագին աշխատութիւնը, որ արժանացել է Պետրս Մահմէտ Մեսրովբեան առաջին մրցանակին և բաշխուած է 400 մանրատառ տպագրած երեսներից վաճառւում է այժմ 3 րուբլով, թէպէտ հեղինակի կենդանութեան ժամանակ նշանակուած էր գինը 5 րուբլի։

X—31.

ԼՈՂԱՐԱՆ ԲՈՒԺԵՆՈՒԹ ՎԻԵՆՆԱՅԻ ՄՕՏ

Ծննդեան-ապի ապրիլեան (13 Հատ 25—36₀ 3.)

լուղարաններ ամբողջ ամառուայ ընթացքում։

Անցեալ տարի 19,308 լուձախորդ կար։ Քաղաքը գանում է գեղեցիկ տեղում։ Լուղարաններն ամեն յարմարութիւններով և չքեղ։

Ճաշասեղանները գանում են համալսարանի բոլոր դասախօսութիւնների ու յարմարութիւնները. նոր կուրսեր բացում կենցերատի մեծ և չքեղ դահլիճ է շինուած, նամանաւանդ ընթերցարան, հայարան, պետական հեռախօս, ջուրը խմելու համար նոր շինութիւն, ամարանոցն լճափոն և փառաւոր այգի։ Բաղնիք ջուրը խմելու համար գալիս է Վլիննայի ջրանցքներից։ Պահանջողներին անցնելութիւններն ուղարկում են Տրիէ։

ՋՐԵՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

(525, շ. ա). 10—11.

Արդուզարդի օձանութի և հոտանիւթ ապրանքների

ՍԵՊՏԷՄԲԵՐ ԳՈՐԾԱՐԱՆ

ՌԻՉԱՐԴ ՎԻԼԴՏԻ Վարչութիւն. արգոյ հասարակութեան առաջարկում է վաղելիկի օճառ, անգլիական սրխոտչրպիչի օճառ, մանելիկի օճառ՝ 12 տեսակ հոտով, Սիւիդ-ըը-Լէտիւ, Տրիւդա, Գելիօտրոպ։

ԹՈՓՇՆԵՑԻԿ ՕՃԱՌՆԵՐ

Բժշկական օճառներ, գլիցերինի օճառ, գուդնատոր օճառ, օ-գլկոլոն Տրիպլ և տոտամի էլէքսիր։

Վաճառւում է գաւառներում՝ շատ գեղատներում և վարսավերների մօտ։

30—7.

ԻՕԿԱԿԱՆ ՀԱՆՔՈՒՅԻՆ ԼՈՒԾԻՉ ՋՈՒՐ

ՓՐԱՆՑ-ԵՕՋԷՓ

Ապրիւրից։ Վաճառւում է Բաւսթայի և արտասահմանի բոլոր գեղատներում և գեղատնային խանութներում։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԲՈՒԺԱՊԵՏՈՒՄ

(515. շ. հ.) 25—21.

Յարմար է պարերի համար

ՀԵՐՈՓՈՆ

10 պիեսով

30 ՐՈՒԲ.

ՐԻՍՏՈՆ-ՕՐԳԱՆ

10 պիեսով 24 ՐՈՒԲ.

Կան մեծ բանակութեամբ նոր հրատարակ մեներգերգական և պարի գործիքներ և պարագաներ։

ՅՈՒԼԻՈՒՍ ՀԵՆՐԻԽ ՋԻՄՄԵՐՄԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՒ ՉԱՅՆԱՊԱՐԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԵՊՈ.

ՄՈՍԿՈՒԱ, կուզնեցկի կամուրջ, տուն Զախարինի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Բ. Մոսկայա, № 34 և 40.

Պատկերազարդ պրէյս-կուրանտ և ձայնատեարների գնացակը — ձրի։

20—14

ԼԷ ՀԱՐԴԻՆ

Ամբողջ աշխարհին յայտնի միակ խմորիչ

ԱԼԻՋԱՐԻՆԻ ԹԱՆԱՔ ՆԱՄԱԿՆԵՐԻ ԵՒ ՊԱՏՃԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ,

որքանով հատատութիւնների մէջ հանդիսացած է իրի առաջին տեսակի, լեհերի ջնջելի, կատարեալ սև և գեղացկուն։

ԱՄԵՆԱԼԱՒԻՆ Է

Գրքերի, վիպագրերի, արձանագրութիւնների և ամեն տեսակ գրութիւնների համար. կարելի է ստանալ Թուխայի բոլոր կանցելեարական պարագաների խանութներում։

Ակց. Լէօնհարդի Բրեզդենում հնարող է միակ գործարանաէ րը։

—կէնձ-նեբէյ խ.—

(506 շ. հ.) 25 13.

ԳՐՈՂ ՄԵՔԵՆԱՅ

ԹԻՊՐՆԳՏՈՆ № 5

Ամենանոր բոլոր եղած տիպամի գրող մեքենաներից. ճանաչուած է ամենագլուն աշխարհիս երեսին։ ՀԱՐԻՒՐ. ՆԵՐՈՎ են գործ ածւում բոլոր հինգպարոնիանների և հատուածքային ուրիշ հատկապոնիաններ մէջ։

Յուցակներն և կառավարութեան յայտնած կարծիքը ձրի։

ԱՒԵՏՐԱԿԱՆ ՏԱՒՆ Ժ. ԼԱՒԿ

Պետերբուրգ, Օկեսա, Մոսկուա, Վարշաւ.

20—15

Дозволено цензурою Тифлисъ 15 го Іюля 1892 г. Տպարան «Կաւկազ» լրագրի Типографія «Кавказъ» Гол. пр., домъ Читахова.